



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԻԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

13 նոյեմբերի 2007թ.

N 805-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ Ս ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՍ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Հ Ր Ա Մ Ա Ն

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին» N 123-Ն որոշմամբ հաստատված՝ լիազորված մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգի 23-րդ կետը, Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննության արդյունքների կապակցությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն բերված բողոքների քննարկման հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1460-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «ժգ» ենթակետը.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ բերված բողոքները քննարկող հանձնաժողով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ բերված բողոքները քննարկող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն 1-ին հավելվածի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ բերված բողոքները քննարկող հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն 2-րդ հավելվածի:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 1  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի  
նախարարի 2007թ. նոյեմբեր-ի N 805-  
Ահրամանի

**ԿԱԶՄ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ  
ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Ս. Կարայան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ  
(հանձնաժողովի նախագահ)
- Գ. Հակոբյան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական  
վերահսկողության վարչության պետ
- Ա. Մնացականյան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
- Հ. Մելիքյան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
աշխատակազմի հաշվապահական հաշվառման և աուդիտի  
մեթոդաբանության վարչության ֆինանսական  
հաշվետվությունների մեթոդաբանության բաժնի գլխավոր  
մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ  
ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն բերված բողոքները քննարկող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով:

2. Հանձնաժողովը ձևավորվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության այն աշխատակիցներից, ովքեր չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության աուդիտորների որակավորման հանձնաժողովի անդամներ:

II. Հանձնաժողովի խնդիրն ու գործառույթները

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրը՝ Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն բերված բողոքների քննարկումը և որոշումների ընդունումն է:

4. Հանձնաժողովն իր առջև դրված հիմնական խնդիրներին համապատասխան քննարկում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն բերված բողոքները և կայացնում է բողոքներն ամբողջությամբ կամ մասամբ ընդունելու կամ մերժելու վերաբերյալ որոշումներ:

### III. Հանձնաժողովի գործունեության կազմակերպումը

5. Հանձնաժողովը բողոքները քննարկում է իր նիստերում, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների արդյունքների կապակցությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն բերված բողոքները ստացվելուց (գրավոր բողոքը նախարարություն մուտքագրվելուց) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե նիստի ժամանակ բողոքները քննարկելիս առաջանում են լրացուցիչ հարցեր, որոնց լուծում տալու համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան պարզաբանումներ, ապա հաջորդ նիստը հրավիրվում է, ոչ ուշ, քան բողոքները ստացվելուց (գրավոր բողոքը նախարարություն մուտքագրվելուց) հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

6. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հոգուտ բողոք բերած անձի:

8. Հարցերի քննարկման մասին բողոք բերած անձին պատվիրված նամակով ուղարկված ծանուցմամբ կամ հեռախոսագրով հայտնվում է քննարկումից ոչ ուշ, քան մեկ օր առաջ՝ տեղեկացնելով նրան քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի ու ժամի մասին:

9. Հանձնաժողովի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի անդամները:

10. Հանձնաժողովի նիստի նախագահողը բողոքները քննարկելիս հայտարարում է, թե ինչ բողոք է քննարկվելու, ովքեր են հրավիրվել քննարկմանը, բողոքների քննարկմանը մասնակցող անձանց բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, հրապարակում է բողոքի, ինչպես նաև քննարկվող այլ փաստաթղթերի բովանդակությունը:

11. Հանձնաժողովի նիստի նախագահողի հայտարարությունից հետո հանձնաժողովը լսում է բողոք բերած անձի բողոքով ներկայացված փաստարկները և հիմնավորումները, որից հետո հանձնաժողովի անդամները և Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ բողոք բերած անձին:

12. Բողոք բերած անձին լսելուց հետո հանձնաժողովը լսում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի անդամների կարծիքը՝ բողոքի կապակցությամբ, որից հետո հանձնաժողովի անդամները և բողոք բերած անձը կարող են հարցեր տալ Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի անդամներին:

13. Բողոքների քննարկմանը բողոք բերած անձանց չմասնակցելը հիմք չի հանդիսանում բողոքները չքննարկելու կամ այն մերժելու համար, եթե բողոք բերած անձը չի խնդրել քննարկումն անցկացնել այլ ժամկետում: Բողոք բերած անձի այդ խնդրանքը կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի պատճառով և, եթե քննարկումը հետաձգելիս չեն խախտվի օրենքով նախատեսված քննարկման ժամկետները:

14. Բողոք բերած անձն իրավունք ունի քննարկմանը մասնակից դարձնել մասնագետի, փորձագետի, աուդիտորի, իրավաբանի կամ թարգմանչի: Բողոք բերած անձը կամ նրա շահերի պաշտպաններն իրավունք ունեն ելույթներ ունենալ, պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին, միջնորդություններ հարուցել, ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր:

15. Բողոքների քննարկումները կատարվում են դռնբաց:

Քննարկվող բողոքների քննարկմանը կարող են մասնակցել լրագրողներ, մասնագետներ, պաշտոնատար և այլ անձինք:

16. Հանձնաժողովը բողոքի քննության ավարտից հետո առանձին սենյակում՝ դռնփակ կայացնում է որոշում.

ա) գնահատված միավորները թողնել անփոփոխ,

բ) գնահատված միավորները ավելացնել (նշելով միավորը)

գ) գնահատված միավորները իջեցնել (նշելով միավորը)

Գնահատված միավորները ավելացնելու կամ իջեցնելու դեպքում պետք է նշվի խնդրի (թեստի) համարը և միավորը:

Հանձնաժողովի կողմից որոշման կայացման ժամանակ այդ սենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները:

17. Հանձնաժողովի որոշման եզրափակիչ մասը որոշումը կայացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում կամ ուղարկվում է բողոք բերած անձին և Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովին:

Հանձնաժողովի որոշման եզրափակիչ մասում.

ա) գնահատված միավորները փոփոխվելու դեպքում Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի կողմից գնահատված միավորները՝ տվյալ բողոքի առարկայի մասով համարվում է չեղյալ,

բ) գնահատված միավորները անփոփոխ թողնվելու դեպքում Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հանձնաժողովի կողմից գնահատված միավորները մնում են անփոփոխ:

18. Հանձնաժողովում բողոքների քննարկումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է՝

ա) հանձնաժողովի նիստի ամսաթիվը և տեղը,

բ) հանձնաժողովի տեսակը և կազմը,

գ) քննարկվող բողոքի բովանդակությունը,

դ) տեղեկություններ քննարկմանը մասնակցող անձանց մասին,

ե) բողոքի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

զ) բողոքի քննարկման ընթացքում հետազոտված փաստաթղթերը և այլ ապացույցները,

է) հանձնաժողովի որոշման բովանդակությունը,

ը) բողոքի քննարկման ժամանակ քննարկված էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

19. Հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում դրանք,

բ) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները,

գ) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և որոշումները,

դ) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

20. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը,

բ) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և դրանց գործունեության հետ առնչվող մյուս փաստաթղթերն ու գրագրությունները,

գ) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, որոշումները, դրանցից քաղվածքները և կազմակերպում դրանց տարածումը,

դ) մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում վերջինիս բնագավառին վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկությունները, նախապատրաստում առաջարկություններ դրանց վերաբերյալ:

21. Հանձնաժողովի անդամները՝

ա) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, իրականացնում են հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ աշխատանքներ,

բ) ստորագրում են հանձնաժողովի նիստերի արձանագրությունները՝ անհրաժեշտության դեպքում դրանց կցելով իրենց հատուկ կարծիքները,

գ) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

IV. Հանձնաժողովի որոշումների իրավական հետևանքները

22. Հանձնաժողովի կողմից սույն կարգի 16-րդ կետով նախատեսված որոշումներ ընդունելու դեպքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը ընդունում է համապատասխան որոշումներ:

V. Հանձնաժողովի գործունեության դադարումը

23. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով:

24. Հանձնաժողովի գործունեության դադարումից հետո հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը և այլ նյութերը ենթակա են պահպանման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: